

Furman

Thomas Furman

George Washington Furman

891.99.09

F-19

1907p

W 1624

ԳՐԻՊՐԱՎԱՐԱՆՆԵՐ

ԵՌՈՒ ՓԱԽԻՐ

ԳՐԱԿԱՆ ԽՈՒԼԻԳՐԱՆԻՑ

(Իմ աղանայ պատասխանը Վառապետից Ս.-ից)

За правое дело
Говори смело!
Իմս ճող. առած:

ԹԻՖԼԻՉ

Տպարան «Լ. ՊՈՒՆՍ» Գանձարկույա Ձ 3.

1907

891.99.09
F-19

291 33 22

-19

ւթ.

300

1156-60

© ԳՐԻԳՈՐ ԲԱՆԸԱՆԵՆՆԵՆ

13 APR 2011



ՀԵՌՈՒՒ ՓԱԽԻՐ

ԳՐԵԿԱՆ ԽՈՒԼԻԳՆԵՆԻՑ

(Ըմ աղանայ պատասխանը Բանալեանց Ս.-ին)

За правое дѣло
Говори смѣло!

Ռուս ժող. ասուած:



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան «Էպոխա» ԽՍՀՄ Գրադարանի ԽՍՀՄ
Гановская № 3.

1907

ՀԵՌՈՒՒ ՓԸԽԻՐ ԳՐԱԿԱՆ ԽՈՒԼԻԳՈՆԻՑ

(Իմ սկսանայ պատարանը Քամալեանց Ս.-ից)

Սիրելի Հայրենակից

Լեոն Մելիք-Աղամեանց.

Նոր կառավարչի պաշտօնով գալով Ղափանի պղնձահանքերը, ես ուզում էի, գրական ժողովրդից ու բանակիւններից հեռու, միբիչ անդորրութիւն գտնել Ձանգեզուրի այս լեռնային վայրերում. սակայն՝ սպասածիս հակառակ իմ բաղձած անդորրութիւնը հէնց առաջին քայլում իսկ խանգարուեց: Պատճառը իմ ծանօթ գրագէտներից մէկն է, որ յետևիցս փոստով անմիջապէս ուղարկել է ինձ Քամալեանց Ս.-ի «Ինչո՞ւ էր հերստտել, X հարուստը մախաթի ծակում և Փոքրոզի բարեկամներ» վերնագրով գրքոյկը. գրքոյկ, որ բացի փոզոցային յատկութիւններից՝ կատարելապէս զգուելի պատկվիլի բնաւորութիւն է կրում: Չգիտեմ բարեկամս ինչո՞ւ էր ուղարկել. երևի ինձ պատժելու համար: Օ՛, որքան զգուելով զգվում եմ սխալմամբ լուրը կոչուած այդ վարչելի Քամալեանց Ս. արարածից: Հաւատա՛, ես սիրով յանձն կ'առնէի դժոխքն անգամ

գնալ տանջուելու, միայն թէ, այո՛, միայն թէ այդ արհամարհուած «յայտնի» գրական խուլի-
 գանից հեռու փախչէի՝ ոչ երեսը տեսնէի, ոչ էլ անուան անգամ լսէի, ուր մնաց նրա փէշակա-
 ւոր «կեղծուպատիր» խճճմանքները կարգալու
 և նրանց ուշադրութեան արժանացնելու միտքն
 ու արամագրութիւնն ունենայի. այս տողերն էլ
 գրում եմ սկամայից ստիպուած: Դէ, սուղիդն ա-
 սա, թէ քո Աստուածը կը սիրես. ի՞նչ է արդեօք
 ներկայացնում 64 էջից բաղկացած այդ ողորմելի
 գրքոյկը, եթէ ոչ մի կիսասիւնյազար ապուշի ցնո-
 րարանութիւններ, գունաւորած և սնգուրած ան-
 բուժելի մեծամտութեան «ես»-ի և «ինքնագով-
 քի» շլացնող կեղծ գոհարներով: Մի հարցնող լի-
 նի, թէ ինչո՞ւ համար է հրատարակել Իսկ ի՞նչ
 կ'ասես սրան. «Մարիս» լրագրում տպել է յայ-
 տարարութիւն, խնդրելով միջոց ունեցող հայերին
 օգնել իրան հրատարակութեան գործում: Հապա
 ի՞նչպէս է, որ այդ միջոց և փող չունեցողը յան-
 կարձ կարողանում է իր ծախսով տպագրել իր
 «ես»-ը, իր «հայհոյանքները» և, երանի մեր ազ-
 գի աչքին, առանց քաշուելու հրամցնում հայ
 ժողովրդին կարգալու: Ախ ժամանակ ու բար-
 քեր...

Թէև կ'ուզէի այդ գրքոյկի վրայից բոլոր-
 ովին լուծեամբ անցնել, բայց որովհետև նրա-
 նում կան գանազան խորամանկ զիզզագններով և
 ոլորապտոյաներով յերկրած մութ ակնարկներ,

չաբամիտ առարկութիւններ և անհիմն ենթա-
 դրութիւններ, որ գուցէ կարողանան միամիտ
 ընթերցողներին մոլորութեան մէջ գցել, ուստի
 հարկադրուած եմ միքանի խօսքով այդ «չափ
 ու գլուխը կորցրած», այդ «այլանդակ բարոյա-
 կանի տէր» պարոնի խուլիգանութեան իսկական
 պատկերը պարզել և սալ ըմբռնելու մի վեր-
 ջին փառաւոր դաս ևս, որպէսզի ոչ մի իրաւունք
 չունենայ ձայն-ծալտուն հանելու և իր «դահլա-
 քիւշտ» կոանչոցով ձանձրացնելու շատերին:

Քամալխանցը տոսխօս է քառիս ամենալայն
 իմաստով: Ահա ինչպէս: Նա գետեղել է իր այդ
 գրքոյկի մէջ իմ մի նամակը՝ գրուած 1891 թ. մայի-
 սի 23-ին: Այդ նամակը հրատարակելով՝ նա նպա-
 տակ է ունեցել ընթերցողի առաջ պարծենալու
 որ ես նրան ասել եմ իբր թէ «մեծ ուսուցիչ»:
 Ան քեզ տրաքոց. այդ էր պակաս: Թող ինքը
 ձեռը խղճի (եթէ ունի) վրայ դրած խոստովանի՝
 արդեօք իմ ուսուցիչը եղած կ'այ երբեք: Քեզ
 էլ լաւ յայտնի է, որ այդ սուտ է, այն էլ պողա-
 ւոր սուտ, որի մասին մեր հայրենակիցներին
 ամեն մէկն էլ կը վկայէ: Մինչև անգամ կեղծել
 է սզգանունս՝ տպելով Բալասանեան, մինչդեռ
 առաջ յօդուածներին տակ դնում էի Բալասան
 ստորագրութիւնը (տես «Բազմավէպ», «Բանա-
 սէր», «Մշակ», «Լումայ», և այլն): Երևակայում
 եմ թէ իր հրատարակած ձեռագիր նամակներին
 մէջ էլ ինչեր արած կը լինի: Ասած է՝ «Քրիս-

տոսին խելքով ճանաչեցին»։ Ի՞նչ էս կարծում,
 եթէ մի բոպէ նա իմ ուսուցիչը եղած լինէր,
 մի՞թէ էս այնքան յիմար էի, որ թոյլ տայի նրա
 մասին քո գրած «Սխալմամբ մարդ կոչուած
 ջախջախիչ», բարոյապէս սպանող յօդուածը իմ
 հիմնած «Ձարկ» շաբաթաթերթում հրատարա-
 կուէր, չէ՞ որ իմ պատիւն էլ այդտեղ արատա-
 ւորուած կը նկատէի, երբ նա հրապարակով իս-
 կապէս մեղադրվում էր որպէս հազուադիւր «ման-
 կա...վարժ», որպէս աշակերտներ ըննաւարող
 դաստիարակ։ Այդ դէպքում կամ անձնասպան կը
 լինէի կամ նրա օձիքից պինդ բռնած կը ստիպէի
 անպատճառ դատարանով արդարանալ այդ ծանր
 մեղադրանքից։ Իսկ հակառակ դէպքում բոլորո-
 վին կը հրաժարուէի այնուհետեւ նրան օրինաւոր
 մարդ ճանաչելուց և յաւիտեան խզուած կը հա-
 մարէի յարաբերութիւններս նրա հետ, ինչպէս
 որ եղաւ։ Բայց տես ինչպէս վարուեցին նրա
 «անպատիւ պատուաւոր» աշակերտները—նրանք
 մնացին լուռ և անտարբեր. դա ձեռնտու էր
 նրանց, որովհետեւ վաղուց ճանաչում էին Քամա-
 լեանցի ինչ պտուղ լինելը։ Ամօթից ինչ ասէին,
 երբ նրանցից շատերը կատարել են այդ քարոյա-
 կան հրէշի համար տակաքարի պաշտօններ։
 Փնօք ու պատիւ գրանց. մի բարձի ծերանան...
 Շատ մեծ սուտ է ստում, որ իբր թէ իր Շու-
 լավէրի աշակերտները չկարողացան լուռ մնալ
 իրանց դպրոցի պատուի սոսնահարուելուն և հեր-

բում գրեցին քո դէմ, բայց Թիֆլիզի ոչ մի թերթ
 յանձն չառաւ (?) «Ձարկի» դէմ հերքում տպել։
 Ոչ թէ աշակերտներն են այդ բանը զգացել, այլ
 ինքն է գիւղի տականք Վարդան Տէր-Պօղոսեանի
 միջոցով շարունակ նամակներ գրել, խնդրել, ա-
 դաչել և մարդ մէջ գցել, որ մի կերպ իրան օգ-
 նութիւն հասցնեն և պաշտպանեն։ Նրանք էլ
 խզալով իբրև մի ցեխում ընկածի և այն յուսով
 որ ներսիսեան դպրոցից գուցէ չվճնգուի, եթէ
 մի բան գրեն, խաթրիւշուն մի հերքում ուղար-
 կեցին «Մշակին»։ «Մշակի» խմբագրութեանը վա-
 զուց յայտնի էր թէ ինչ գգուելի արարած է
 Քամ. Ս., ուստի կարևոր փաստերից բոլոր-
 րովին գուրկ գրութիւնը զամբիւղ նետե-
 ցին։ Զուր է մէջ բերել նաև իմ քենակալ
 Վ. Մեհրաբեանին, վասնզի այդ մարդն էր, որ «գա-
 կազով» և իր ոտով գալով ինձ մօտ խմբագրա-
 տուն, պուկը բռնած խնդրեց, պաղատեց, որ ձեռք
 քաշեմ Ք.-ից և ընդհատեմ յօդուածիդ շարունա-
 կութիւնը «Ձարկի» մէջ։ Ահա թէ ինչ էր ասում
 նա.

«Ք.-ին սող-սող մեռցրել էք. ամօթից չի
 դուրս գալիս տանից, ընկեր-ուսուցիչները և ա-
 շակերտները երես են թեքել նրանից, ուսում-
 նարան չի յաճախում այլևս դասաւանդելու, հի-
 ւանդ տանը պառկած հագում է և արիւն թքում.
 այդ բաւական համարեցէք և խնդրում եմ վերջ
 տաք նրա դէմ գրութիւններին»։ Ես չէի հաւա-

սում. կարծում էի ստամենկուծիւն է սալիս: Եկան և միքանի պարոններ և նոյնը կրկնեցին. էլի գժուարանում էի հաւատալ, մինչև որ աչքովս տեսայ Ք.-ի գրատոր մեղայականը իր մի ծանօթին գրած, որի մէջ յայտնում էր, թէ քիչ է մնում անձնապահութեան գիմէ: Նոր հաւատացի և լինելով խղճի, զգացմունքի մարդ՝ իսկապէս խղճահարուեցայ. անս այդ հիման վրայ յօգուածդ կիսատ թողի: Ի հարկէ դու իրաւունք ունէիր ինձնից վիրաւորուելու, ինչպէս որ վիրաւորուեցիր էլ: Հիմա տես թէ իմ բարութիւնը ինչպէս դէպի չարն է դործ գրել. հանգամանքից օգտուելով Ք.-ն թոյլ է տուել իրան այս տողերը գրելու. «սակայն իմ մեծահոգութիւնը (լրբութիւնը տես. դատարանին չգիմելն է ակնարկում) չգնահատեց Լ. Մ.-Ազ.-ը: Երբ Գր. Բալ. անգամ զգուեց նրա զրպատութիւններից (ինչո՞վ ես հաստատում այդ, այ ոգորմելի. չէ՞-որ այդ միջոցին «Չարկը» ընդհատուած էր), նա «Չարկից» անցաւ «Հովուին»: Մի բան միայն ճիշտ է ասում. այն. ես զգուել եմ, բայց ինչից. զգուել եմ ոչ թէ քո գրածներից, սիրելի Լեոն, այլ այն բանից, որ չեմ ուզեցել նախ՝ «Չարկի» էջերը շնամուտաւ անել Ք.-ի նման փողոցային փշացած մարդկանց անառակ կեանքի «սխրագործ» պատմութիւններով և երկրորդ՝ զիջել եմ իր «գակագով» ինձ մօտ ուղարկած պարոնների թախանձանքին:

Քամալեանցը զրպարտիչ է քառի քուն նշա-

նակուծեամբ: Նա մեղազրում է ինձ, որ ես իբր թէ Գ. Մեղիքսեղէկեանցի ձեռագրերը արտագրել, իւրացրել եմ, մի մարդու, որի երեսն անգամ չեմ տեսած: Դա մի այնպիսի սուտ է, որի վրայ եփած հաւի ծիծաղն էլ կը գայ: Հենրիխ Պեստալցցի և Ժան-Ժակ-Րոլասօ ինքս եմ թարգմանել իմ մի բարեկամի օգնութեամբ (զրա օգոստոսի 1-ին Ք.-ի այդ զրպարտութեան դէմ գրած նոր նամակը մօտս է, հարկ եղած դէպքում պատրաստ եմ հրատարակ հանել), բայց շուտով ձեռք քաշեցի թարգմանութիւններից և նուիրուեցի միմիայն ինքնուրոյն վաստակների, քննադատական ճիւղին, մանաւանդ մեր ազգային ժողովրդական բանահիւսութեանը («Մասմայ Ծուեր», Մասունի Մեծ վէպը) գեղարուեստի չափի տակ դնելուն՝ բանաստեղծական վերակազմութեամբ: Երևի նըրան ասել են գանձ, նա հասկազել է մի ինչ-որ անհամ տանձ: Եղելութիւնն այս է. մի օր իմ ազգականներից մէկը այդ խելագար և սիֆիլիսից տխուր վախճան ունեցող հանգուցեալի երկու ձեռագիրը («Քնախօսութիւն» և «Մարդակազմութիւն») յանձնեց ինձ, որ կարծիք յայտնեմ՝ արդեօք արժանի են տպագրութեան, թէ ոչ: Կարծիքս աննպատակ էր, մինչև անգամ յայտնեցի և այն, որ զբանք վառարանում այրուելու բաներ են: Յոյց տուի նաև մասնագէտների, որոնք ծիծաղեցին և դէն շպրտեցին՝ համարելով խելագարի ցնդաբանութիւններ՝ դուրկ միանգամայն

գրական արժանիքներից» Ահա այդ բանն է մատի փաթաթան շինել ողորմելի Ք.-ն և չարախօս անպիտան պառուս կնկայ պէս իմ հասցէին բամբասերով ման է գալիս մութ անկիւններում: Բայց ո՞վ է կարևորութիւն տուողը: Ասած է՝ «նմանը նմանին կը սիրէ»: Աղուէսն իր պոչն է վկայ բերում. գիտես ո՞ւմ. Մովսէսին (Միրգեանց): Գիտեմ մտքումդ կուշտ կը ծիծաղես, որովհետև շատ լաւ գիտես, թէ դա ինչ իժի ծնունդն է, ինչ անբարոյական վարք ու բարբի տէր, չարապետ և թունդ բամբասասէր, բայց Ք.-ի ժանգոտ գրչի տակից յանկարծ դուրս է եկել «ագնիւ երիտասարդ». այն, այնքան ագնիւ, որքան Ք.-ն ինքն է ագնիւ գրական խուլիզանութեան և անմեղ աշակերտներ առևանգելու ստպարէզում: Երանի մեր ազգին, երբ Քամալեանցներն ու նրանմանակ Մովսէսներն են դուրս եկել ճշմարտութեան պաշտպաններ և գրական բարբերի մասին ճառողներ...

Քոռանաս, անխարհ, քոռանաս...

Մի օր Վ. Մեհրաբեանը Ք.-ի վայրահաջութիւնը իմ ականջը հասցրեց. նա ասաց. «Եղբայր, քո մասին չարախօսող կայ. փորձի համար ես քեզ մի հետաքրքիր բան կը պատմեմ. մի բան՝ որ գրականութեան մէջ ո՞չ գրուած է, ո՞չ լսուած: Եթէ այդ նիւթից նրկու-նրկը տարուայ մէջ մի պօէմա բանաստեղծես՝ նման գրածդ «Ռոստոմ և Սալման», «Երկու պանդախ», «Առիւծածի

Մհեր», «Սասունցի Դաւիթ», «Պատիկ Մհեր» և «Որբիկների արցունքները» աշխատութիւններիդ, այն ժամանակ ես կը համոզուեմ, որ դու տալանդ և ընդունակութիւն ունես իսկպական գրողի և բանաստեղծի կոչման, իսկ քո երգուեալ թշնամիների ասած-խօսեցածները՝ միայն բամբասանք և զրպարտութիւն կը համարեմ»:

— Ի՞նչ փոյթ, ասացի, կարող են զանազան նրկոտանի շներ մթին քունջ ու պուճախներից իմ գէմ հաջոցներ և կլանչոցներ բարձրացնել, ո՞ւմ բերանը փակել: Ինչ ուզում են, թող բամբասեն: Բամբասանքը մի այնպիսի բան է, որ ինչքան էլ դռները ամուր գոցես, էլի որևէ տեղից ներս կը մտնի: Խելօք և ագնիւ մարդը գրչի աւագակների և յիմարների աչքում խելապակաս և անագնիւ կ'երևայ, լուրջ գրական թերթը՝ խուլիզան խիկարների կարծիքով փողոցային կը դառնայ: Պարսից Սաադին ասում է. «Եթէ ստեղծութեան աչքով հրեշտակին նայես, հրեշտակը սատանայ կ'երևայ. իսկ եթէ սիրոյ աչքով սատանային նայես, սատանան հրեշտակ կը դառնայ»: (Տես Գր. Նիկողոսեանի՝ «Տեսութիւններ և նամակներ»): Ես համաձայնուեցի և պ. Մեհրաբեանը պատմեց ինձ Լօռուայ մի մոռացուած հերոսի կեանքի արկածները («Վէրք Հայաստանի»-ի հերոս Աղասու ժամանակակից): Նիւթը ինձ հետաքրքրեց. սկսեցի այդ նիւթի մասին հում նիւթեր ժողովել գիւղական համայնքներից: Այդ միջոցին

պատրաստում էի և մեր Շուլժավէր գիւղի պատմութիւնը՝ Սիւնեաց աշխարհից այնտեղ գաղթած հայ մեկիքների կեանքից. «Զարկում» այդ պօէմից սպազրուեց միայն երկու գլուխ՝ «Գիւղի հերոսը» վերնագրով: Զանցած մի ամիս, յայտնեցի պ. Մեհրաբեանին, որ արդէն պատրաստ է «Ճօճկանեցի Սուղին» *) երկու հատոր, մօտ 200 էրես: Նա շատ զարմացաւ, թէ ինչպէս ամենակարճ միջոցում գործը գլուխ բերուեց: Գրուածքը ուղարկեցի «Տարագ»-ին պատասխանը չուշացաւ, պ. Նար-Դոսը գրում էր, որ կը տպուի և տպուեց 1904—1905 թուերի համարներում: Հէնց մե՛ակ այս անվիճելի փաստից ընթերցողը կարող է եզրակացնել, որ Գ.-ն մեծ ընդունակութիւն ունի վայրահաջութեամբ անմեղ մարդկանց զրպարտելու:

Քամալեանցը զտուանցանքի սիրահար է: Նա գառանցում է, որ ես իբր թէ ուղղակի միայն կոյր գործիք եմ դարձել քո ձեռքին: Բայց այդպէս է: Դու լաւ ես իմանում իմ բնաւորութիւնը. բնաւորութիւն՝ որ կրաւորական դեր խաղալուց շատ հեռու է և անկախ. ինքզ էլ կարող ես վկայել, որ շատ դէպքերում ի վնաս իմ քո կամքին հակառակ եմ գնացել և երբէք չեմ ենթարկուել կողմնակի ազդեցութեան, ապացոյց

*) Պ. Մեհրաբեանը այնքան սիրում էր Սուղի հերոսին, որ նրա անունով էր երբեմն թղթակցում «Մըշակին»:

յօդուածիդ կիսատ թողնելը: Ուրեմն ինչպէս թէ քո ձեռքին կոյր գործիք եմ եղել: Ես չգիտեմ ինչ հիման վրայ է Գ.-ն ինձ յանդուգն համարում իր նման մի աննշան գրչակի մասին գրելու համար: Ասել է՝ առաջ է բերել իմ նամակը նրա համար, որ ընթերցողները տեսնեն, թէ ինչպէս եմ կոյր գործիք դարձել քո ձեռքին. բայց սրտեղից սրտեղ. այնքան մտքի կոյր է, որ չի կարողանում 1891 և 1906 թո. երբ միմեանցից տարբ' ըել. ինչ կապ, ինչ առնչութիւն, ես չեմ հասկանում: Որ ասում եմ գառանցանքի սիրահար է, չես հաւատում. ախպէր, էդ մարդը լափ սարսաղացել ու ախմախացել է. ուղեղը կանգ է առել, էլ չի գործում, գօթի բան հօ չէ. պէտք է շուտով տանել դրան հիւանդանոց, ուրիշ ճար չկայ:

Լաւ կարգա, կետն, նորից կարգա այդ նամակը և տես մի տող, մի կէտ, մի բառ կա՞յ արգեօք, որ այնտեղ ասուած լինի քո մասին և որևէ փաստ ծառայէր նրա «Երևակայական» ասածին: Խեղճ, խեղճ տղայ, գառանցանքի մէջ խելքը կորցնելով ըմբռնողութիւնն այնքան խանգարուել է, որ իր կարդացածի բուն իմաստը չի էլ կարողանում հասկանալ և պատասխանել ըստ էութեան: Յետոյ ինչպէս թէ օձ է տաքացրել. «Հիւսիսափայլի» և «Արձագանքի» միքանի՛ ինձ հարկաւոր եղած համարներն իրանից իբրև գիւղի գար. գրադարանապետից երկտողով խնդրել

և դրա համար էլ քաղաքավարի շնորհակալութիւնն յայտնելու միթէ այն է ապացուցանում, որ նա օձ է տաքացրել և եղել է ուսուցիչս: Արի ու մի ծիծաղիր: Հետաքրքիր է իմանալ՝ այդ հանճարեղ և տարօրինակ լրգիկան և տրամաբանութիւնը որ գիտնական կաճառում, անի, ներողութիւն՝ որ ախտուումն է սովորել, կամ գուցէ թէ Իլլանում և կամ Փոշտի-աղբրում այս կամ այն աշակերտի հետ առանձնութեան մէջ... Ասում է վրէն թքել. ո՞ւմ վրայ. իմ, որ իբրև մամուլի ներկայացուցիչ, նիւթական կարիքների մէջ տապակուելով և տաք ու հով անելով ստիպուած եմ եղել կնոջս գլխի և կրծքի զարդերը վաճառել և վերջի կողէկներս «Ձարկի» հրատարակութեան վրայ գործ դնել, թէ՛ նրան, որ միայն գրական խուլիզան է, պոռնիկ «մանկա...վարժ», խեղճ երեխաների պատիւը հարստահարող... Փանք քեզ, Աստուած, փանք, տես ո՞վ է ազնութեան և բարոյականութեան մասին ճշտմաբանում: Ազնութիւն և Քամալեանց— սի, սրպիսի ծաղր, սրպիսի սարսափելի հակադրութիւն...

Թամալեանցը հիւանդոտ երեսակայող է, որ առաջ է գալիս նրա գոնհիկ եւ խաւարամիտ լինելուց: Փոքրուց (ինձ է ակնարկում. բայց հետաքրքիր է տեղեկանալ՝ քանի տարով է ինձնից մեծ) բացի պատկառանքը իմ դէմ ոչինչ չի ունեցել, ինչպէս ամեն մի շուրավերցի երիտա-

սարդ»: Ո՛հնց չէ, քո հօրն ողորմի. խալխի սիրտը գնում է քեզ համար, էլի: Եթէ ճիշտ է ասածդ, հապա ինչո՞ւ հայրենի ժողովուրդը անշնչելի դրոշմով յատկացրել է վրէժ՝ անպիտան սոլտի, քոստ-շուն, մուրտառ աղուէս, քախիլ (չկամ), նահանձ օձ, կայն, մի շարք տիտղոսներ, որոնց վրայ միայն նախանձուել կարող են Քամ.-ի նման գրական խուլիզանները:

Երբ մեր «պատմական գեաղէն» տեսու իր գաւառում պատիւ չունի և գիւղացիք էլ նոր են սկսում գլխի ընկնել նրա անբարոյական ընթացքի մասին դժբաղդ երեխաների վերաբերմամբ, վեր կացաւ իսկոյն և ջանգամուեց Գանձակ, Կողպ, Նիժ: Լինելով աննօրմալ հակման տէր, պարզ է որ ուր որ ոտ է դրել, իր հազուագիւտ «մանկա... վարժութեամբ» իր ետեից թողած պէտք է լինի սև յիշատակներ՝ ստացած «շան քեթիակներ» արմանալի ու զարմանալի պատմութիւններով... Եւ այդպիսի հրէշը դեռ յանդգնում է ինչ-որ «մտացածին» պատկառանքի մասին խօսել: Ի՛նչ արած, լեզուի տակին ոսկոր չկայ, որ սուտ խօսելիս՝ ծակի: Երեք խօսք որ գրում է, 2³¹/₁-ականը նրանցից անպատճառ սուտ է լինում: Եւ ի՛նչ կարելի է սպասել մի «եալանչի փանկանից, մի խարդախ հէքեաթաբանից»:

Մէկին գաւառապետը կանչում է իր մօտ և տան ներսում ապտակում գործած յանցանքի համար: Երբ գուրս է գալիս, այնտեղ կանգնած

ժողովուրդը հարցնում է նրան. «Ինչու էր կանչել գաւառապետը»:

—Օ՛, լաւ մարդ է գաւառապետը, ասում է նա. կանչեց տուն, վրայ ընկաւ համբուրեց ձաւատիցս և ասաց՝ мерзавецъ! (կարծել է՝ МОЛОДЕЦЬ) և լաւ պատիւներ տուաւ ինձ»: Հիմի Բ.-ի բանն է դառնի. լինելով անամօթ՝ բարոյական և թէ ֆիզիքական քեօթական է, որ ստանում է այստեղ և այնտեղ, արհամարհանք է, որ տածում է ժողովուրդը դէպի նրան, իսկ նա մի գլուխ քաղցր երազներով է օրօրում իրան:

Ըստայեանցը գրքեր յափշտակող է, այն էլ գիւղական գրադարանի սեպհականութիւնից: Ահա ինչպէս: Մի օր այդ պարոնը եկաւ հօրս վաճառատուն և խնդրեց ինձնից, որ գրքեր նուիրեմ մեր գիւղի նորաբաց գրադարանին: Երկար ու բարակ զրոյց սկսեց և գլուխս տարաւ. իր սովորական շատախօսութեամբ: «Մշակ»-ում նրա երկասիրութիւնների մասին աննպաստ խօսելիս պ. Լէօն գուր չէր նկատել, որ Բ.-ի հոգեհանը շատախօսութիւնն է: Ինչևիցէ: Մի գլուխ գովում էր իրան և ինքն էլ շատ հիացած էր իրանով: Գրուստն ասած՝ մեղքս ինչ թագցնեմ, ես էլ սկսեցի գովել և ինչպէս չգովէի, երբ նա ձեռք էր զարկում մի սուրբ գործի՝ գիւղի գրադարանի սկզբնաւորութեան: Բայց շուտով հիասթափուեցի. բանից երևաց, որ ես շատ բոբիկ եմ եղել մարդ ճանաչելում. դու մի ասիլ, դի-



մակի տակ թագնուած մի խորամանկ և եղել հետս խօսողը, մի գրադարանի «անկոչ» հիմնողը: Ես լսաբուելով՝ առի նրա ձեռք բաւականաչափ զրքեր, որոնց ճակատին նա մատարով նշանակեց իմ անունը: Անցաւ ժամանակ: Մի օր Քամ. Ս.-ի ազգականի սեղանի վրայ աչքովս ընկաւ իմ նո. իրած գրքերից, անունս ուետիմով ջնջած, կազմերը փոխած և կեղծած: Բարկութիւնս զլուխս տուաւ. իմ յանդիմանելը նրա վրայ ազդեցութիւն չունեցաւ: Ես, հարկից ստիպուած, տեղաւորեցի «Մշակ»-ում սրանից տարիներ առաջ մի թունդ կոթոց (ցաւում եմ, որ այդ Ձե-ը ձեռի տակ չունեմ, գիտեմ դու էլ կարգացած կը լինես): Այն օրից ես հրաժարուեցի նրան կարգին մարդ ճանաչելուց և ամեն տեսանելիս հեռու էի փախչում և նայում վրէժն այն աչքով, ինչ աչքով որ խոզի մսին թուրքն է նայում (և այդ է նշանակում դէպի իրան տածած «պատկառանք»): Եւ այնուհետեւ երբ մեծ-մեծ խօսում, գրում կամ քարոզում էր, միշտ աչքիս առաջն էր տնկվում յիշեալ տղեղ փաստը և ալկանջիս շարունակ փափսում՝ հետո՛ւ փախիլ զրական խորիզանից: Թղթակցութեանս մէջ նոյն իսկ հրապարակով նրանից հաշիւ էի պահանջել գրադարանի գրքերի մասին, բայց նա պապանձուած լուծիւն պահպանեց ըուն հարցի մասին, և ի՛նչ կարող էր պատասխանել, երբ պար-

գապէս զբքեր յափշտակող է: Միայն մեր հար-
 ընակիցներէրից մէկը, պ. Արշակ Ղազարեանը նոյն
 «Մշակ»-ում պատասխանեց, որ իր ձեռքով ժու-
 դոված գրքերի մի մասը՝ գրադարանի օգտին,
 գանվում է Ա. Չօբանեանի մօտ (այն ժամանակ
 կենդան): Այժմ ինքդ գտար, թէ մինչ որ առ-
 ափճանի ցած ու փոքրոգի արարած է Ք.-ը: Ու-
 ընն էլ խօսք կարող է լինել պատկառանքի մաս-
 սին, որ այդ բարոյապէս ընկածը ճիշդ է թա-
 փում գօտով վզիս փաթաթել:

Քամալեանցը մտքի հիւանդ է: Նա գրում է.
 «Զարկ»-ի սարգամիտ խմբագրին (այսինքն ինձ)
 խելքից հանելով, նրա գրութեամբ զբքոյկներէս
 մասին մի հայհոյական գրախօսութիւն էր գե-
 տեղել «Զարկ»-ի № 1-ի մէջ»: Լսւ է որ այդ-
 պէս է գրում, իսկ մասնաւոր շրջաններում նեն-
 գամիտը յուր էր տարածել թէ յօդուածը գո-
 ւես գրել, բայց ես եմ ստորագրել: Հարց-
 նում եմ՝ մի՞թէ խելքը գլխին մարդը թոյլ կը
 տայ այդպիսի արմախ ու սարսաղ կարծիք յայտ-
 նելու: Հաւատա՞, սիրելի Լեոն, եթէ ինձնում մը
 քիչ նպատաւոր կարծիք կամ հաւատ էր մտ-
 ցել այդ խուլիգանի, այդ «հակաբնական հակ-
 ման տէր հերոսի» վերաբերմամբ, այժմ վերջիւ
 նշոյն էլ կորաւ ու չքացաւ: Ախր ինչ պնդերէս
 պիտի լինի մէկը, որ իրան թոյլ տայ գրելու
 այդ տողերը և չկարմրի: Ուրեմն նա ինձ ինչէ՞
 տեղ է գնում. ես եմ յիմարը, թէ ինքը: Մի՞թէ

ես ինձ թոյլ կը տայի մի այդպիսի քայլ անելու.
 կամ մի՞թէ քեզ չի ճանաչում. մի՞թէ դու կը
 համաձայնէիր այդ բանին:

Խեղճ ողորմելին մի՞թէ ինձ այնքան անճա-
 րակ է կարծում, որ անկարող լինէի նրա գրք-
 քոյկների մասին մի կարգին գրախօսութիւն գը-
 րել: Հապա ինչպէս է, որ «Բազմավէպին» աշ-
 խատակցելիս Մխիթարեան գիտնական հայրերը
 այդ ամսագրի 1897—1898 թուահամարների պա-
 տասխան բաժնում նուաստիս մասին հետեւեալ
 կարծիքն են յայտնել. «Գրութիւննիդ յաջորդա-
 բար յառաջ կերթայ, լաւ է, ախորժելի նոյնիսկ
 ըստ վկայութեան հեղինակաւոր անձանց:—Շատ
 գո՞ն է Ձեզմէ խմբագրութիւնս, միշտ այնպէս
 անխոնջ և բեղմնաւոր մնայ Ձեր գրիչն»: Լողա-
 նում հրատարակուող «Գիտութիւն» ամսագրի
 խմբագիր և Հայկազեան վարժարանի տեսուչ Մ.
 Նալբանդեան, դօկտօր գիտութեանց, № 7-ի մէջ
 իր գոհունակութիւնն ու շնորհակալութիւնն էր
 յայտնում իմ աշխատակցութեան առիթով: Ես
 կարող էի առաջ բերել շատ նպաստաւոր ու հա-
 մակրական նամակաձև գրութիւններ նշանաւոր
 գրագէտներից ստացուած, սակայն չեմ ուզում
 համեստութեան շրջանակից դուրս գալ, ինչպէս
 որ Ք.-ն է թոյլ տուել իրան: Բայց երբ կրքից այդ-
 քան կուրացած է երևում և միամիտ ձևանում,
 հարցնում եմ նրան՝ ո՞վ էր «Բազմավէպում» տա-
 լիս ճանապարհորդական տպաւորութիւններ և

լեզուական հարցեր. ո՞վ էր «Նոր-Պարին» թաւ-
րիզից Պարսից քաղաքական և հասարակական
կեանքից ընդարձակ տեղեկութիւններ հաղոր-
դում «Նամակներ Պարսկաստանից» բանասիրա-
կան շարունակելի յօդուածներով Աստղանիշ,
Վաչագան, Ճանապարհորդ և այլ ստորագրութիւն-
ներով. ո՞վ էր աշխատակցում Կ. Բասմաշեա-
նի գիտական «Բանասէր»-ին Կովկասից. ո՞վ էր
«Լուծայում» բանաստեղծութիւններ գրում. ո՞վ
էր «Արշալոյսում» անվախ զինվում թուրք աղա-
լարների շահատակութիւնների դէմ թուրք-հայ-
կական կոտորածների ժամանակ. ո՞վ էր «Մշա-
կում» ընթացիկ երևոյթների մասին գաւառա-
կան թղթակցութիւններ գրում Բօրչալուից. ո՞վ
էր «Տարագում» պօէմա տալիս. ո՞վ էր «Չարկ»
շարաթաթերթը հիմնել... Ահա այդքան բաներից
յետոյ յանկարծ վերկենալ և գրչի մի թեթև շար-
ժումով և այն առանց պատկառելու և խորը մը-
տածելու, մարդի երեսին շարտել այդպիսի մի
աբսուրդ, երեխայական մի այնպիսի անհեթեթ
կարծիք, ո՞չ մի կերպով ներելի չէ ո՞չ մի ընդ-
դիմախօսի, ով էլ որ լինէր՝ տգէտ թէ զարգացած.
Բայց ինչ եմ ասում, չէ՞ որ Ք.-ն երջանիկ բա-
ցառութիւն է կազմում. նրան ներելի է ամեն
բան, այո՛, ամեն բան, քանի որ նա այդ աստի-
ճանի ստորացած է և խուլիգանացած... Բոլորն
էլ ծիծաղում են և արդէն վճռական համոզմունք
են կազմել, որ Քամ.-ը ուղղակի մտքի հիւանդ

է, նրան բժշկել է հարկաւոր, հետևանքը կարող
է վտանգաւոր լինել նրա համար, եթէ այդ մա-
սին չհնդգացուի: Այո՛, ես էլ այդ բանում համո-
զուեցի այժմ: Ախր ի՞նչ է նշանակում այս՝ «Պար-
գամիտ» (բոլորն էլ պարգամիտ են Ք.-ի աչքում,
ովքեր գրիչ են շարժում իր դէմ) Զ. Գրիգորեանը
մոռանալով իւր երկար տարիների բարեկամու-
թիւնը (ո՞չ-որ չի կամենում իր բարեկամը լինել,
իսկ դա լրբաբար փաթաթում է ամենի վզին իր
բարեկամութիւնը), ինձ հետ ունեցած նամակա-
գրութիւնը, վիրաւորուած նրա համար՝ թէ ին-
չո՞ւ «Երկունքից» Սասունցի Յովնան գրքոյկն
եմ կազմել (ի՞նչ բարոյական իրաւունքով ես
կազմել, երբ նա նախագգուշացրել է քեզ պ.պ.
Սալամբէգեանի և Ղ. Կարապետեանի ներկայու-
թեամբ չանել այդպիսի անազնիւ քայլ), որովհե-
տե և հեղինակին—Ծերեցին վարձատրել է, առել
է նրանից ստորագրութիւն, որով իրաւունքը
միայն Զ. Գ.-ին է պատկանում, իսկ դու յան-
դըգնել ես անարգել Ծերեցցի ստորագրութիւնը),
ընկաւ չարախօս Լ. Մ.-Ագ.-ի (Լևոնը չի կարող
չարախօս լինել, այլ միայն ճշմարտախօս) ազդե-
ցութեան տակ (ամենքի համար սիրելի Լևոնը յան-
կարծ ի՞նչպէս չարախօս դարձաւ. մի՞թէ նրա հա-
մար, որ քաջութիւն ունեցաւ դիմակդ պատուե-
լու) ու նրա շարադրած (?) չարամիտ գրութիւնը
ստորագրելով (անամօթ ստախօս) տեղաւորեց
«Հովուի» № № 6 և 7-ի մէջ:» (Այստեղ էլ նոյն

օրօրն է երգում, ինչ որ իմ մասին էր ասում
 ախր ի՛նչպէս չասեմ, որ Ք.-ն մտքի հիւանդ է,
 այն էլ շատ խղճալի հիւանդ. արդեօք ինքը իր
 գրածի միտքը հասկանում է, արդեօք չի՞ դուժ-
 ինքը, որ այդ ցնդաբանութեան վրայ ընթերցող-
 ներն այժմ ծիծաղում են: Մի՞թէ համալսարա-
 նական մարդն էլ, որ երկար տարիներով ուսուց-
 չութիւն է արել հայ դպրոցներում, «Մեղու»
 լրագրի աշխատակիցն է եղել, բնագիտութեան և
 մարդակազմութեան դասագրքեր է յօրինել և յօ-
 րինում, այնքան անձարակ դարձաւ, որ չկարո-
 յացաւ Ք.-ի բանագողութեամբ և խուլիզանու-
 թեամբ իր կրած նիւթական վնասի մասին մի
 երկտող բան գրել, և նա ի՛նչպէս կարող էր ի-
 րան թոյլ տալ՝ ուրիշի շարադրած յօդուածի տակ
 իր ստորագրութիւնը դնել): «Գոեհիկ լաղաբն ու
 ինսինուացիաները, որ գործ էր ածել Չ. Գ., ոչ
 թէ պատկառելի հասակով համալսարանական
 մարդու էին վայել, այլ Հաւաքարի փողոցում
 ապրած մի կինտոյի»: Ք.-ի ձեռքով գրուած այդ
 խօսքերը շատ կարգին ու տեղին են միայն իրան
 համար ու շատ սագական: Եթէ գոեհիկ լաղաբի ու
 ինսինուացիաների համար է ասում, դրանց գոհար-
 ներով լինքն է իր հայրոյական ողորմելի գրքոյկը,
 իսկ եթէ Հաւաքարի փողոցում ապրած կինտոյի հա-
 մար է մասնանշում, իրանից լաւ կինտօ, լաւ խուլի-
 զան որ սաղ աշխարհն էլ քանդես, մի ուրիշը չի՞
 ձարուի: Բն հնց չբարկանամ, սիրելի Լևոն. էդ

անաքանդը էնքան երախտամոռ է դարձել և
 աղ ու հացը ծնգան վրայ քիւրդ է, որ իր բա-
 րերարի հասցէին էլ շարտում է այդպիսի գեա-
 դայական խօսքեր: Իր աչքի անազին գերա-
 նը թողած՝ ուրիշների աչքի շիւղն է պտրտում:
 Ուղտին հարցրին՝ վիզդ ինչի՞ է ծուռը, ասաց՝
 ինչս է դիւզ, որ վիզս էլ դիւզ լինի: Ք.-ն երբ
 է ագիււ մարդ եղել, որ հիմա ագիււ երեւայ: Այդ
 համալսարանական պատկառելի մարդը՝ պ. Զ. Գր.
 է, որ Ք.-ի աղաչանք-պաղատանքին զիջելով
 նրա համար միջնորդել է տիկին Նաղիբեանցի
 մօտ և նրա ծախքով արտասահման ուղարկել,
 որ զարգանայ, մարդ դառնայ, ազգի համար պի-
 տանի անդամ լինի, բայց նա ի՛նչ անէ և ի՛նչ
 մեղաւոր է, որ Ք.-ն մնացել է էլի նախկին ախ-
 մախը, էլի նոյն սիւալմամբ մարդ կոչուածը և
 նոյն մաքի հիւանդը. ուղտի պոչի պէս ոչ երկա-
 րացել է, ոչ կարճացել: Թուրքն ասում է՝ «Ալ-
 լահ վերմադի, փեղամբար նեէյլասըն» (Սասուած
 որ տուել չի *) մարդարէն ի՛նչ անէ): Եւ այդ է
 պատճառը, որ համալսարանականը իր տան ձրիա-
 կեր — «մուհտախժող» պնակալէզ խուլիզանի
 կողմից այդ պատուին է արժանանում և այդ
 միայն նրա համար, որ նա, յանուն ճշմարտու-
 թեան և արդարութեան, դուրս է եկել և Ք.-ի
 ամարդութիւնները մի առ մի սպացուցել և թէ

*) Խօսքը շնորհքի, ձիրքի, մարդավարութեան
 մասին է:

գրքոյկները վերաբերմամբ իմ գրած գրախօսականում յայտնածս մտքերը ճշտութիւնը հաստատել: Այո, թող ականջի բուրդը մի լաւ հանի և վերջին անգամ լաւ լսի, որ ես ուրիշի ծափ ու գունայով ոչ պարել եմ և ոչ էլ կը պարեմ. երևի իրան պատահել է այդպիսի բան և ուրիշի վրայ էլ նոյն աչքով է նայում: Բաւական է մի փաստ և Ք.-ի երևակայական քաղցը երազը կը ցնդի օդում: Ո՞րտեղից դու կարող էին տեղեկութիւն ունենալ այդ գրախօսութեան մասին, երբ դու թիֆլիզ, ես՝ Շուլավէր, ուղարկել եմ «Յոյսին» և նախ այդ շաբաթաթերթումն է տրպուել: Բայց հաստատ տեղեկանալով, որ այն համարները գրաւուած են տպարանում և չեն տարածուելու, հարկ համարեցի «Զարկի» № 1-ի մէջ արտատպել: Սիրելի Լևոն, նա պէտք է դեռ քեզնից շնորհակալ լինի, որ ջնջեցիր իմ յօդուածից տեղին ասուած շատ դատը խօսքեր և մեղմացրի շատ կծու դարձուածներս, մինչդեռ նա դրպարտում է քեզ և չարախօսում վրադ:

Քամայիւնացը մեծամիտ և սնասպարձ Լ. հիւանդագին փառասիրութիւնից ստաշացած: — «Այս բոլորէիս էլ, գրում է նա, չեմ հաւատում, թէ Գր. Բալ.-ը այնքան յանդուգն դառնար, որ իմ հասցէին այնպիսի վայրահաջութեամբ լիք յօդուած շարագրէր»:

Մտիկ տնւր, մի լաւ մտիկ և տես թէ այդ մեծամիտը ինչով է զանազանվում Կոնիովի նկարա-

գրած այն գորտից, որ ինքն իրան գոռոզութիւնից փքուելով ու փքուելով վերջը տրաքվում է միջից ու սատակում: Ճիշտ այդ տեսակ գորտերը թուին է պատկանում և Ք.-ը: Երևակայիր, այդ տխմարը այն աստիճանի մեծամտել է, որ հետս հեղինակական տոնով է խօսում, շատ բարձրից: Բայց ի՞նչ է ներկայացնում ինքը իր «երեւակայական» հսկայ փիղ տեղովը, եթէ ոչ մի ոչնչութիւն, իր փառասէր ես-ի տրամագրութեան տակ ընկած, կամքից գուրկ մի խղճալի սարուկ... Թող որքան ուզում է ոտների կրնկան վրայ բարձրանայ, բայց և այնպէս չի մեծանալ բարոյապէս. ցորնով լիքը—ատօք հասկերը իրանց զլինները միշտ ներքե են պահում, իսկ դատարկ—ազազուն հասկերը՝ ցից և բարձր: Ասած է՝ ծառը քանի պտուղ շատ վերցնի, զուլսը կախ կը բռնի, և ընդհակառակը: Չինարին էլ բոյով շատ բարձր է, բայց ի՞նչ կ'անես, պտուղ չունի: Երկրագնդիս երեսին ինքնագովքից զգուելի բան չկայ. երբ մի մարդ սկսում է ինքն իր գլուխը գովել, եթէ նոյնիսկ հանճար էլ լինի (մի բան, որ Ք.-ն ոչ թէ հանճար է այլ միայն ըանջար), նա իր վարկը կը ձգի, նա գրոշանոց մարդ է: Թող զնահատութեան կշիռ տայ հասարակութիւնը և պատմութիւնը և ոչ ինքը, ինչևիցէ. Ք.-ն իմ գրախօսութիւնը համարում է հայհոյական և վայրահաջութեամբ լիք, սինչդեռ այդ բաներից այնքան հեռու է, որքան երկինքը երկրից: Թող

կարգան ընթերցողները և համեմատեն պ. Չաքարիա Գրիգորեանցի գրածի հետ «Հովիւ» № 6 և 7 սոյն թ. նոյն նիւթի մասին, ապա ըստ այնմ վճիռ կայացնեն ու դատեն, թէ որքան աշխատել եմ ճշմարտութեան մօտ լինել, Բ.-ն, սակայն, չի սխալվում՝ այդ յօդուածը, որ տեղին է զարկում, միայն մէջ թագնուած դառն ճշմարտութիւններ է պարզում և գրական գողերին ապտակում, իր նման գրական խուլիգանների խելքով կարող է լինել հայհոյական և վայրահաշուութեամբ լի:

Քամայեանցը գրական գող է: Այն, գրական գող է, այդ հաստատել եմ իմ գրախօսականում: Թող կոխուվի կապիկի նման հայելու մէջ իր երեւեցած անճոռնի պատկերը չվերագրի ուրիշին: Այն, միայն գրական գողը կարող է «Մատենցի Յովնան», «Սիրելի հերոս», «Ժամանակը ոսկի» և «Սիրտ» գրքերի ճակատից ջնջել և հեռացնել Ծերենցի, Խ. Աբովեանի, Ս. Նազարեանցի և Փ. Վարդարեանի նման պատկառելի անունները և նրանց տեղ անկել իր լաթակեղա գրօջը՝ «Կազմեց Քամայեանց Ս.» բառերը: Այդ գէպքում անհամեստ տոնով գրած յառաջարկներն էլ ոչինչ չեն օգնում նրան, բացի այն, որ ծաղրի է մատնվում և անճոռնիացնվում մեր նշանաւոր հեղինակների լեզուն, ճոխ, կենդանի ու հարուստ ոճը՝ շնորհիւ Բ.-ի բոբիկ հայագիտութեան և ճապող ու աղքատ լեզուի:

Քամայեանցը գրական պոռնիկ է: Այդ բանը, սիրելի Լեւոն, դու ամենից լաւ գիտես, ընթերցողներն էլ անշուշտ արդէն համոզուել են, որովհետեւ փաստերն են խօսում: Տեսնենք ինչու է կայանում նրա գրական պոռնիկութիւնը: Շուրջվէրում հարուստ Սիմէօն Պառաւեանցը (այժմ վախճանուած) գիւղի օգանին դպրոցական շէնք կառուցանելիս յանկարծ Բ.-ի հօր կողմից ենթարկվում է անտեղի ընդդիմադրութեան: Դերձակ Աւետիքը, խիղճը կորցրած, մի թզաշափ հողի համար դալմադալ է սարքում և ձեռք թափ տալով գողգողում. «խալխի հէրն էլ անիծած. էստեղ մարդ կը սպանուի—հօդն իմն է, չեմ թողնիլ շիօլ շինուի»: Էգօիստական նեղ հակուսներով անուած Բ.-ը, չնայելով հաստատ տեղեկանում է և համոզվում, որ հողը հասարակական է, հետևաբար հօր պահանջը անիրաւացի է և վարմունքը՝ գռեհիկ, այնուամենայնիւ իր խուլիգան բնոյթի և սովորութեան համաձայն, ի վրէժխնդրութիւն, դուրս է գալիս «Արձագանք»-ում և իր կինտոյական ամբողջիկ հայհոյանքն է թափում Ս. Պ.-ի գլխին: Ս. Պ. չկարողանալով այդ վիրաւորանքը տանել, գիմում է գատարանին: Մի ընդարձակ հերքում էլ ուղարկում է «Արձագանք»-ին, բայց Բ.-ն Արգար Յովհաննիսեանի ձեռն ու ոտն ընկած մի կերպ արգելք է լինում սպազրելուն: Ս. Պ. հարկադրուած գիմում է գրաքննական օրէնքին և 139-րդ յօ-

գուածի հիման վրայ՝ թէև շատ ջնջումներով լոյս է տեսնում և Ք.-ի բոլոր զրպարտութիւնները մանրամասնօրէն մերկացնող չախճախիչ հերքումը, սակայն այդ խնդրին Քամայեանց Ս.-ը իր «չալ-չալ» ստերից հիւսած «երևելի» գրքոյկում ուրիշ գոյն է տուել, ուրիշ ձև: Ճնշողին այն էր, գրում է, որ ես ու Ս. Պ.-ը հաշտուէինք — այդ բանը Լևոնն էր ուզում, բայց գլուխ եկաւ Ս. Հախումեանի միջոցով Մ. Սարգսեանի տանը: Լևոնը բծախնդրութեան պոչից բռնելով խոր վիրաւորուած զգաց իրան և վրէժ հանելու համար այդ մասնաւոր դէպքը լրագրութեան նիւթ շինեց»...

Օ՛, եզուխտ, եզուխտ, ի՛նչպէս չքմեղ գառնուկ ես ձևանում և ընթերցողին երեխայի տեղ դնում: Ո՛վ հաւատաց: Լևոնի վերաբերմամբ այդ պոչաւոր սուտը գրելով մի՞թէ սրտիդ ներսում խղճի խայթ չես գգում. բայց ի՛նչ մեղադրել քեզ, երբ ամեն մի ճշմարտութիւն և սրբութիւն բարի և ազնիւ զգացմունք պաս է և մեռած քեզ համար: Մրտախր, ստեր յերիւրիւր, ինչքան ուզում ես, գրիչն ու թուղթը ամեն բան տանում են, իսկ դու էլ կարմրելու ընդունակութիւն չունիս:

Բայց ամեն բան ունի իր չափն ու սահմանը, սիրելի Լևոնը այն մարդը չէ, որ թողնի ճշմարտութիւնը ստքի տակ ընկնի. շուտով կը հրատարակի միայն ճշմարտախօսին վայել իր համարձակ ու խիզախ պատասխանը, այն ժա-

մանակ տեսնենք ո՛ւր ես փախչելու խայտառակ կեղծիքների ու զրածդ անամօթ ստերի պատճառով...

Սիրելի Լևոն, ես շատ լաւ գիտեմ, որ Ք.-ն է ընկել ոտներդ և խնդրել, որ յաջողեցնես Ս. Պ.-ի հետ հաշտեցնել:

Այո՛, դու եղար հաշտութեան գործը գլուխ բերողը, երբ սկզբում Ս. Հախումեանը և շատերը չկարողացան գլուխ բերել, բայց դու էլ այն պայմանով արիւր, որ Ս. Պ.-ի կազմած բանաձևը անփոփոխ տպագրուէր «Արձագանք»-ում ի գլխութիւն հասարակութեան, որպէս մեղակայական Ք.-ի կողմից: Ք.-ն ուրախութիւնից թուչկոտալով համաձայնուեց և Ս. Պ. գնաց դատարան, ստորագրեց ու գործը կանգնեցրեց: Այդ բանից օգտուելով խաբեբայ Ք.-ն ձգձգեց խայտառակ մեղայականի հրատարակելը և քեզ ամօթով թողեց Ս. Պ.-ի մօտ: Քո պնդելու վրայ՝ Մխիթար-Մխիթարիկ Թուխ-մանուկ, թէ շուն-մանուկ, Շմեղ և էլ չգիտեմ ինչ գահրումար կեղծ անուններ կրող Ք.-ն հրատարակեց բանաձևի պատճէնը, բայց աղաւաղած ու ձևը փոխած: Ս. Պ. բարկացած «Մշակ»-ում դուրս եկաւ նրա դէմ և քեզ իբրև հաշտեցնողի դեր կատարողի հրապարակական բացատրութեան հրաւիրեց և բանաձևի խկականը տպեց: Ք.-ն նեղն ընկած՝ Աբգարի դամարը մտաւ և նա էլ քեզ լուել ստիպեց: «Արձագանք»-ի և «Մշակ»-ի միջև, ստել էր նա, մեծ

բանակուիւ է մղվում և Լևոնն էլ, որպէս «Ար-
ձագանք»-ը սրբագրող, պէտք է մեր կողմը, մեր
շահը պաշտպանի. բայց եթէ «Մշակ»-ում Ք.-ի
դէմ որևէ բացատրութիւն գրի, այն ժամա-
նակ ստիպուած կը լինեմ պաշտօնից հեռացներ։
Սակայն դու աշխատանքիդ այդ անվայել սպառ-
նալիքները և լաւ համարեցիր պաշտօնից գրկուել,
քան համոզմունքիդ դէմ գնալով՝ ուրանալ ճշշ-
մարտութիւնը, և այդ սկզբունքի վրայ կռթնած՝
հանդէս եկար «Մշակ»-ում և սպացուցեցիր, թէ
ինչպէս Ք.-ն խաբելով ի չարն է գործ գրել քո
վստահութիւնը և դու միամտութիւն ես ունե-
ցել նրան մարդ համարելու։ Ք.-ն այն ժամա-
նակ լուրթեամբ տարաւ այդ բարոյական ապ-
տակը՝ չունենալով արդարանալու ոչ մի հնար։
Իսկ այժմ 12 տարուց յետոյ է հաշում վրադ՝
յոյսը դրած այն բանի վրայ, որ ընթերցողները
չեն քրքրիլ հին թերթերը։

«Արձագանք»-ում հրատարակել էր «Ախր
ինչո՞ւ է» յօդուածը, որ այժմ դիմամբ դարձրել
է «Ինչո՞ւ էր ճերտոտեր» և խուլիզանի ու գրական
պոռնիկին վայել ձևով փոփոխելով արատապել
վերջին գրքոյկում, բայց թէ ինչո՞ւ համար, այդ
միայն սատանան գիտէ։

Ի՛է, ասա, սիրելի Լևոն, ո՞ր խելքը գլխին
գրիչ բռնող մարդը կամ գրագէտը թոյլ կը տայ
իրան այդ բանը։ Բայց չէ՞ որ ամեն բան հնա-
րաւոր է Ք.-ի համար. Ի՛նչ է նշանակում Ս.Պ.-ին

տպագրական խօսքով ներկայացնել վաշխառու և
հասարակական փողեր կլանող, յետոյ մեղայ
գալ և դարձեալ տպագրական խօսքով նոյն մար-
դուն համակրանք յայտնել, Հապա ինչպէս շա-
սեմ, պ. Գր. Նիկողոսեանի պէս՝ թէ «թճւն գրա-
շան կաշի երեսին»։ Այո, Ք.-ն գրական պոռնիկ
է և դեռ աւելի վատթար։ Յոյց տուր, որ գրա-
գէտն է այդպիսի խուլիզանական վարմունքի
գիմել։ Գոնէ օրինակ վերցնէր Ս. Մալուժեանից,
որ «Նոր-Դար»-ի մասին Արշակաւան գրելու
պատճառով դատի ենթարկուեց, բայց նա լաւ
համարեց բանտ նստել, քան իր խօսքը ուրանալ
(Ք.-ի գլխից է կտրուել)։ Ահա ազնիւ գրողի նը-
շանաբանը և երանի նրան, ով մինչև վերջը իր
գրչին չի դաւաճանիլ։

Քամակնանցը վարձկան գրչակ է, և րախ-
տամոռ եւ պասկվիլ յերկրող։ Իր «Երևելի» գըր-
քոյկում նա գետեղել է և մի յօդուած ևս՝ «X
հարուստը մախաթի ծակում» վերնագրով։ Սիրե-
լի Լևոն, քեզ էլ, մեզ էլ լաւ յայտնի է, որ Ք.-ն
X հարուստի տանը եղել է երկար ու ձիգ տա-
քինների ընթացքում պնակալէզ, շատ անգամ է
եղել նրա ձաշի վրայ անկոչ հիւրի պէս։ Այն
ժամանակ Ք.-ն նրան գովելով երկինք էր բար-
ձրացնում, նրա արևով էր երգվում, այժմ ինչ-
պէս եղաւ, որ նոյն մարդը յանկարծ դարձաւ
պորտաբոյժ, ժանգով լիքը տոպրակի երկրպա-
ղու։ Թէպէտ հէնց այդ ժանգի համար է որ ինքը

գրական խուլիզան է դարձել: Ահա հետաքրքիրը
 դա է, որ ուզում եմ պարզել, թէ ինչ շարժա-
 սիթից գրողւած է յերկրել այդ գգուելի «պասկ-
 վելը»: Բերլինից Ք.Տ. զիմում է այդ հարուստին,
 որ իրան նպաստ տայ: Բաւական չէ, որ նրա
 տանը ձրիակերութեամբ փօրը կշտացնում է եղել,
 դեռ ինչ-որ նպաստ էլ է պահանջում: Հարուս-
 տը, որ առանց այն էլ ձանձրացած է լինում նրա
 պնդերեսութիւնից, զգուանքով բնցէ ի բաց մեր-
 ժում է՝ նամակն իսկ անպատասխան թողնելով:
 Ահա այդ հանգամանքն է առիթ ծառայում հա-
 բուստի դէմ յարձակուելու. բայց տես Ք.-ի խո-
 բամանկութիւնը՝ նպաստ մերժելու մասին ոչ
 մի խօսք: Այդպէս է վարուել այդ վարձկան գրը-
 չակը և Ս. Պ.-ի հետ: Յարաբերութիւնը լաւ եղած
 ժամանակ նա միշտ պատրաստ է եղել նրան գո-
 վել, գլուխը իւղել՝ նրանից փառաւոր ճաշեր ու-
 տելու և «պատուական կարմիր դինի» խմելու, իսկ
 երբ ինչ-ինչ պատճառներից յարաբերութիւնը
 լարուել է, իսկոյն բաց է արել նրա դէմ էլ իր
 հայհոյանքի բառարանը «Արձագանք»-ում: Այն,
 տեղը եկաւ՝ այս է նա, տեղը եկաւ՝ այն, բայց
 ցաւն այն է, որ ոչ այս է և ոչ այն, այլ կար-
 ծես մի այլասնորում ու խառնածին մլթօնի,
 որ չգիտես ինչ մաստարի (հաւատի) է ծառայում
 և ինչու է միշտ խայտարղլտ քամելիօնի դեր
 կատարում:

Քամայեանցը վախկոտ է ինչպէս նապաս-

տակ: Այն, նա վախկոտ է և դրա ապացոյցը
 ինքն արդէն տուել է: Նրան մամուլի էջերում
 մեղադրում են որպէս անբարոյական վարժա-
 պետ, իսկ նա փոխանակ բողոքելու այդ բանի
 դէմ և գատարանով արդարանալու, սկսել է պատէ
 պատ ընկնել, կամենալով թագ կենալ ուրիշների
 հովանաւորութեան թևի տակ: Խմբագրութիւն-
 ների դռների շէմքը շարունակ լիզելով և պուկր
 բնած ծանօթներից պաշտպանութիւն հայցելով՝
 երբ տեսնում է բան չի դառնում, ամենքն էլ
 իրանից երես են թեքում զգուանքով, լինելով
 իրաւամբ արհամարհուած ամենքից, ճարը կտրած
 լրագրական այդ նիւթը հրատարակել է գրքի
 ձևով և գլխաւոր ինդիքը—իր յանցանքները հեր-
 քելը թողած մի կողմը, սկսել է իր անհիմն գո-
 ոգութեան «ես»-ի ետեից ընկնել՝ իր անբու-
 ժելի անմիա մեծամտութեան, անբուժելի ախ-
 տերի պատմութեամբ ընթերցողների գանչէն տա-
 նել ու ձանձրացնել: Ամօթ:

Պարզապէս երևում է, որ ամենքից արհա-
 մարհուածի համար ամենեւին գոյութիւն չունի
 ոչ ամօթ, որ քաշուէր, ոչ չափ ու սահման, որ
 տեղն իմանար:

Այդ «պասկվիլացաւով» բռնուած Քամ.-ը իր
 գրքոյկով հանգէս է եկել մի աւելորդ անգամ
 ևս ցոյց տալու իր գուեհիկ ու տգէտ լինելը, իր
 ներքին աշխարհի փշացած և պատուից բոլորովին
 թափուր մնալը: Ասում եմ և դարձեալ կը պըն-

դեմ, որ Ք.-ն վախկոտ նապաստակ է. եթէ ճիշտ չլինէր ասածներս, նա մինչև հիմա դիմած կը լինէր դատարանին, մի բան՝ որ քեզ հետ առաջարկում և պահանջում են «Հովիւ»-ի մէջ պ. Ղազարոս Աղայեանը, «Հովիւ»-ի խմբագրութիւնը. պ. պ. Զաքարեա Գրիգորեանը, Կամ. Ա.-ը Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, ուսուցիչները և նոյնիսկ աշակերտները: Մի՞թէ դրանք բոլորն էլ դարձան փոքրոզի. բայց այդպիսի կարծիք միայն խելագարը կ'ունենայ, միայն անմիտը կարող է այդ ասել և այդ բտուերով զարդարել իր «ժամավաճառ» գրքի ձևկատը:

Արդեօք ի՞նչ հիման վրայ է խօսքը կտուրը գցելով, իր կողմից մեծահոգութիւն (?) համարում դատարանին չդիմելը: Թո՞ղ բաց քնի, չմըսի և երազը բարին կատարի... Մեծահոգութիւն, լաւ լսիր. այն, մեծահոգութիւն, բայց նապաստակային վախկոտութեան դիմակի տակ շպարուած: Եւ այդպէս դատելը ձեռնտու է, ի հարկէ, իրան, որովհետև ինքն էլ լաւ զգում է, որ դատարանում կը մեղաւորուի և բարոյապէս հողին կը հաւասարուի, եթէ արդէն հաւասարուած չէ քո մերկացումներից յետոյ: Թուրքն անիծած է, բայց խօսքը օրհնուած. նա ասում է՝ «եր վար՝ դաշմաղ գա բիր հիւնար դըր» — եթէ տեղ կայ՝ փախչելն էլ մի քաջութիւն է:

Թամալեանցը պատուի մասին շատ թոյլ զաղաւիար ունի: Այն, ճիշտ է սա և անվիճելի.

որովհետև չեմ կարծում թէ երկրագնդի երեսին գտնուելի մի հատիկ այնպիսի մարդ՝ փոքր ի շատէ պատուազգած, որ թոյլ տայ իր վրայ կրելու այն թուքն ու մուրը, որ տուիր այդ զրահան պոռնիկին, այն ծանր մեղադրանքները, որ բարդեցիր վրան, բայց նա կրեց և կուլ տուաւ փառաւորապէս: Ամօթ...

Նա ամեն տեղ պարծենում էր իրանմանակ անբարոյականների մօտ, որ քո գրածները իբր թէ... արհամարհում է (լրբութիւնը տես). լաւ, եթէ այդպէս է, հապա «Մշակ»-ում, «Փայլակ»-ում և «Ժայռ»-ում բարբանջելն ու հաջախ ինչ էր. իսկ հիմա էլ առանձին գրքոյկով «կտարած կարասի» նման աղմուկ հանելն ինչ: Այդ էլ արհամարհել է: Ո՞րտեղ է լոգիկան և ուղղամտութիւնը: Ճարը կտրած՝ իրան արդարացնելու համար, պատճառաբանում է, իբր թէ ինքը ուղեցել է դատարանին դիմել, բայց մի ուրիշը չի թողել. «Առանձնապէս խնդրում էր ոչինչ չգրել, ուղղակի արհամարհել (մի՞թէ) Լ. Մ.-Ա.-ի խրճրածանքները իմ բարեկամ (!?) Ե. Ծատուրեանը», գրում է նա: Նախ՝ կ'ասեմ, որ պ. Ծատուրեանը իր բարեկամը չէ և նրան բարեկամ լինել չի կարող. դրան կը վկայեն փոտանելի բոլոր ծանօթ մարդիկ: Երբ Ք.-ն, պատմում են նրանք, գալիս է նրա խանութ, պ. Ծատուրեանը խալոյն զգուանքով շրջում է երեսը և գնում միւս սենեակը, որպէսզի խուլիգանի ժեստից էլ ամուր

ու անամօթ ճակատը աչքովը չընկնի: Ուրեմն, սիրելի Լեոն, ինչպէս կարող էր պ. Եփրեմը քո մասին, իբրև իր տան անդամի մասին, այգպէս խօսել: Երկրորդ՝ պ. Ծատուրեանը սոսկ վաճառական մարդ է, նա ինչո՞ւ պիտի գրականութեան մէջ խառնուի. ուրեմն ինչո՞ւ նրան հանգիստ չի թողնում, չէ՞ որ լրբութիւն է այդ Քամ.-ի կողմից: Լաւ, ենթադրենք, թէ ճիշտ է ասում. հասպա ինչո՞ւ էր «իւր ազիզ բարեկամի» խաթըը կոտրում, նրա բարի խորհուրդները առ ոչինչ համարում և քո գէմ պատասխանում մամուլի մէջ, երբ նա կրկին ու կրկին խորհուրդ էր տալիս՝ լռել և միայն լռել: Եթէ Քամ.-ը խելք ունի, գոնէ հիմա թող հասկանայ, թէ յիմարութիւն էր արածը, որ պ. Ծատուրեանի խորհրդին չհետևեց: Եւ եթէ իր չունեցած պատուի մասին այդքան նախանձախնդիր է, նրա արժէքը այդքան հասկանում է և այդ փափկանկատ հարցում չուզեց բարեկամին լսել և լռութիւն պահել, հասպա ինչո՞ւ նոյնպէս, բարեկամից անկախ, չի վարվում նաև դատարանին դիմելու հարցում: Ի՞նչպէս բացատրել այդ աչքի ընկնող հակասութիւնը: Մահանէդ կտրուի, պօլտի, մահանէդ, որ գլուխդ կտրցրած՝ չգիտես ինչպէս անես, որ մի կերպ դուրս պրծնես: «Կային մարդիկ, խախուտ կերպով պատճառաբանում է Քամ.-ը, որոնք Լուրթիւնս վախկոտութիւն էին համարում (միթէ իրաւ չէ) և մեղադրում ինձ թէ ինչո՞ւ գատա-

Գրեցի զայս 1892 թ. 11 ամիս 15 օր

րանի չեմ գիմում զգուելի զրպարաչին (թէ ճըշմարտախօսին) պատժելու համար: Այդպիսիների մէջն էին Ներս. դպրոցի ուսուցիչների և հոգաբարձուների մի մասը: Լուրուս առիթները (բուրն էլ անպէտք) ահա արդէն հրապարակի վրայ են, թող ընթերցողն ասի, արդեօք պէտք է կըրքոտ հիւանդին (թէ խիզախ մերկացնողին) մի կերպ համբերէի (?!), թէ դատարան քաշէի, ինչպէս պնդում է «Հովիւ»-ի մէջ արևոր Աղայեանը»: Սիրելի Լեոն, քեզ «զգուելի զրպարաիչ» և «կըքոտ հիւանդ» ասելով, Ք.-ն այնպէս է կարծում թէ ամեն բան պրծաւ գնաց, չապա Ներս. դպրոցի Մանկավարժական ժողովը. բայց ազուէսը այդ մասին ևս խորամանկութեամբ լռել է: Երեք անգամ Մանկավարժական ժողով է տեղի ունեցել Ներսիսեան դպրոցում և երեք անգամ էլ ցոյց են տուել նրան դատարանի դուռը այն յարգելի պատճառաբանութեամբ, որ մի դաստիարակ, որի վարք ու բարքի մասին կասկած կայ, ուսուցիչ լինել չի կարող: Երգարանալու համար չունենալով ձեռքին ո՛չ մի փաստ, նա դիմել է ճին-հին դարուց յիշատակներին»—1880—1892 թուերին զրածդ ձեռագիր, բայց յարուցած խնդրի հետ ո՛չ մի կապ, ո՛չ մի առնչութիւն չունեցող նամակներին: Ընդհատում են այդ նամակների ընթերցումը և ժողովում բարձրանում է ծիծաղ: Քամ.-ը գլխակոր հեռանում է ժողովից: Սակայն դպրոցի

Մանկ. ժողովը իր վերջին նիստում մօտաւորապէս հետևեալ արձանագրութիւնն է կազմում. «Քամալեանց Ս.-ը գարշելի և անբարոյական արարած է. նրա ուսուցչական պաշտօնավարելը անպատուութիւն է բերում ներսիսեան դպրանոցին, անպայման պէտք է հեռացնել, որովհետև քաջութիւն չունեցաւ յարգել ոչ Մանկավարժական ժողովի և ոչ դպրոցիս Հոգաբարձութեան առաջարկը դատարանին դիմելու, ուր կարողանար պատիւը վերականգնել... Եւ Քամ.-ը իսկոյն վճռուեց դպրոցից: Ուրեմն էլ ի՞նչ հարկ կար նորից հարց բարձրացնելու դատարանին դիմելու կամ չդիմելու մասին և ի՞նչ հիման վրայ է չդիմելը իր կողմից մեծահոգութիւն համարում: Արջի թանթիկը չհասաւ տանձին, ասաց թող մնայ իմ պապի խէրին»: Տես ինչքան տխմարն է, որ չխրատուած Մանկավարժական ժողովի ծաղր ու ծանակից, նորից դիմել է նոյն ձեռագիր նամակներով օգնութեան, որ իր «Երևելի» գրքոյկում հրատարակել է շատ մեծ խնամքով և չի զլացել նրանց արանքներում մէջէմէջ կցելու, որպէս ծանօթութիւն, լօկի նաղըլեր, ծրտիպրտի, պատաւական մասալէք իրան յատուկ զաւզակութեամբ: Օրինակ՝ նա գրում է, որ դուք սէրով ընկերներ էք նղել, իրար վարդով չոռ էք ասել, միասին ճաշել էք: Թամամ մագալու բան կը լինէր, եթէ գրէր և այն, թէ գիշերները յատկապէս ո՞ր ժամին էիք քուն մտնում, առաւօտ-

ները ո՞ր ժամին վեր կենում, ո՞ր ժամին թէյ խմում և քանի բաժակ, ո՞ր ժամին ճաշում: Ախր ինչացո՞ւ են դրանք, ո՞ւմ կարող են հետաքրքրել: Հնա, մոռացայ ասելու, որ նա շարունակ պարծեցել է և երևի էլի պարծենում է, որ քո նամակները «Սերգօ ջան» բառերով է սկսվում: Լնւ, մի՞թէ Սերգօ ջաները կարող են նրա արար ջնջել: Ողորմելին ժամանակի և տարածութեան մասին կարծես իսկի գազափար չունի, այդ 13 տարի և դեռ շատ առաջ էր. իսկ հիմա: Առաջ լինելով հրէշ՝ դիմակի տակ թաքնուել և սուտ մղնատը է ձեացել և դու էլ դժուարացել ես նրա իսկական պատկերը բնորոշել և լաւ ճանաչել, իսկ այժմ ուրիշ բան է, այժմ փաստերն ու դէպքերն են երևան եկել՝ ցոյց տալով իր զգուելիութիւնը, իր ինչը ինչոց լինելը և դրա համար է, որ նրա մեծահոգի քարնկամները սկսել են երես թեքել արհամարհանքի զգացմունքով: Ի՞նչ ասել է «Սերգօ ջան» և մի՞թէ դա էլ պարծենալու առիթ կամ արդարանալու միջոց է: Եթէ այդպէս է, թող ուրեմն Ք.-ն մխիթարուի և իրան երջանիկ զգայ նրանով, որ մեր հարևան Բագօն էլ իր դուան շանը կանչելիս միշտ ասում էր՝ «Բօղար ջան» .. Եւ այդ «Սերգօ ջաները» տպելով, Քամալեանց Ս.-ը առանց քաջուելու այնպէս է կարծում, թէ իր մեղքից ու յանցանքից բոլորովին թեթևացաւ և մաքուր վարքով դատարարակ դարձաւ: Լուելուս առիթներն անա

արդէն հրապարակի վրայ են» խօսքերով ինչ է ուզում հասկացնել, ո՞ւմ աչքին է թող փշուճ: Սիրելի Անն, ասենք, քո գրածը գէշնր, բա՛ն ո՞ւր թողնենք միւս գրագէտների գրածները իր մասին:

Հրապարակի վրայ մենք ոչինչ չենք տեսնում, բացի քո յիշեալ նամակներից, որ լինելով ընկերական գրչի հանապններ, ընկերական շրջանում զգացած բողոքական տպաւորութիւններ, նոյն շրջանի գորոցում էլ կողպուելու բաներ են—ուրիշ ոչինչ, իսկ միքանիսը նրանցից կարող են գեղեցիկ գծերով առատ նիւթ ընծայել մի կենսագիր և հոգեբան պատմաբանի միայն ի պարծանս քո:

Երբ այդ նամակները կարգացի, Քամ.-ի տգեղ վարմունքը իսկոյն աչքիս առաջ պատկերացաւ նամանութեամբ Խ. Աբովեանի «Պարապ վախտի խաղալիք»-ում նկարագրած այն ախմախ լօռեցիների, որոնք փայտ կտրելու գնացած լինելով՝ երբ տեսնում են ժայռի վրայ ցցուած մի ծառ, նրանից կախ են ընկնում իրար փէշից պինդ բռնած, որ պոկեն, բայց ծառը պոկուելով՝ իրանք էլ ձորն են թափվում:

Փոխանակ թէ քեզ և թէ իր միւս ընդդիմախօսներին՝ փաստերը ձեռքին դատարանով լռեցնելու, նա ընկել է սար ու ձոր, աշուղական նէյնիմաների ետեից: Եւ այդ լարախաղաց հոկաբազը այնքան է մտամանակ և անճարակ դարձել, որ քո նամակների պոչից կախ ընկնելով չի էլ նը-

կատել, որ դրանով աւելի շուտ իր կատարեալ խորտակումը, իր բարոյական անկումն է պատբաստել, իսկ քո բարոյական կողմն աւելի ևս բարձրացրել ու երևան հանել:

Քամախանցը դատարկամիտ սնապարծ է: Այդ բանը ինքն է հաստատում, բայց կուրացած լինելով, չի նկատում: Առաջ բերենք միքանի տող և տանք դրանց հերքում-պատասխանը:

«Գիւղում հիմնել եմ գրագարան (այո՛, անուանա՛լան, ինչպէս «Մշակ»-ում ժամանակին գրել եմ, որ միայն դու ես օգտուել՝ գողանալով և իւրացնելով շատ գրքեր). տալիս եմ ներկայացումներ տեղացի երիտասարդների և աշակերտներիս հետ (այո՛, կուլիաներում տաք-տաք պոօշտիներ փոխանակելով քո շնորհիւ ծուռ ճանապարհի վրայ կանգնած աշակերտներիդ հետ), Աննը ինձնով հիացած է (երջանիկ արարած, որ այդչափ հիւնարով ես, այդչափ գունատոր գաղափարապաշտ). եկեղեցիներում քարոզում եմ կիրակի օրերը» (տէրտէր թէ վարդապետ ձեռնադրուելդ ո՞ւր մնաց, ազբաթըխեր, խալխի աչքը ջուր կտրուեց շատ սպասելուց): «Այս թուի (1884) աշնանը թողնում եմ Շուլավէրը տեղական քահանաների ու ազնուականների հալածանքի երեսից ու զնում Ղազախու կողպ աննշան ոռճիկով»: Շուլավէրից գնալդ ո՛չ թէ քահանաների ու ազնուականների հալածանքն է եղել, այլ պոռնկութիւնը, որի համար գիւղացիք պատրաստ-

վում էին «շան քեօթակ» ուսացնել, բայց խորամանկ աղուէս դու, շուտով գլխի բնկար ու փախար Ղազախ: Սակայն այնտեղից էլ խայտառակութեամբ փախչելուց յետոյ, կրկին եկար ծննդավայրդ՝ Շուլավէր. գիւղացիք չընդունեցին, իսկ դու պնդեցիս թե սկսեցիր «ձրի պարպել» մատաղ երեխաների հետ: Շատ յաճախ տանում էիր նրանց գրօսանքի ու շատ յաճախ նրանցից որևէ մէկի հետ թեանցուկ անհետանում սաղարթախիտ ծառերի հովանու տակ, անտառի խորքը, երևի «անտառաբուծութեան» հետ ծանօթացնելու նպատակով: Այդ «խորհրդաւոր թագուսաները» երեխաները նկատում են և առակ գառնալով լուրը հասնում է նրանց ծնողների ականջը: 1891 թուին գիւղացիք դարձեալ զբոզբոզում են ու մտադրվում մի լաւ խրատելու համար ոտնակոխ տալով լաւ դնքսել... Իզմուր ես գրում ֆոկլորսնիկին վայել աչքակապութեամբ, թէ «1891 թ. աշնան Շուլաւէրու ցեցերի ձեռքից պաշտօնս թողի, գնացի Գանձակ»: Պատճառը ինչպէս պարզեցի, ժողովրդի սաստիկ յուզմունքն է եղել զգուելի «մանկա... վարժութեանդ» դէմ և ոչ թէ երեւակայական ցեցերը...

«Գանձակի մշակական ուսուցիչները Գեղամեանցին համոզելով 1892 թ. փետր. ամսին, ինձ հեռացնել էին տուել պաշտօնից հակառակ հոգաբարձուների կամքի: Ես պարապում էի մասնաւոր դասերով և բանաւոր գրականութեան

նիւթեր ժողովելով»: Շատ մեծ դալաթ ես անում այստեղ էլ սուտ խօսելով, պ. «վարժա... դպեա», քանի որ սուտ խօսելը բան ու գործ ես չիմեի, այն անաքանդ: Յանցանքդ իզուր ես փաթաթում Գեղամեանցի և մշակականների վզին, ընդհակառակը՝ հեռացնելդ եղել է հոգաբարձուների կամքով. երբ տեղեկացել են, որ մի անմեղ փոքրահասակ աղջկայ ապագան փչացրել ես, որից խեղճ աղջիկն էլ խելագարուել է ու մեռել: Ոչ թէ հեռացրել են, ինչպէս գրում ես, այլ «շան քեօթակ» են տուել քեզ գանձակեցիք, որի պատճառով և մասնաւոր դասերից էլ զրկուեցիր: Եկար Թիֆլիզ, նոյն շնորհքդ ուղեցիր ցոյց տալ նաև Յոզն. դպրոցում, բայց չյաջողուեց: Վերջապէս գլուխդ առար, կորար արտասահման ոչբարով աստուածաբանութիւն սովորելու, բայց բարեբարուհիդ՝ տիկին Նազիրեանը երբ տեսաւ թէ խոստացած ժամանակամիջոցն անցկացաւ և տեղեկանալով, որ կարգին բան չես գառնալու, ընդհատեց փող ուղարկելը և երբ Թիֆլիզ վերադարձար և տեսար նրան, շամաչեցիր երեսին ասելու՝ «Տիկին, դեռ սաղ ես»: Յետոյ պախարակելի ճանապարհով մտար Ներսիսեան դպրոց. նորերս՝ անա այդտեղից էլ վճարեցին մասուլի մէջ եղած մերկացումների պատճառով: Ուրեմն ի՞նչ երեսով ես ներկայացնում ընթերցողին «ցուցակ ծառայութեանդ»: Այդ անելով, այն ոգորմելի, միայն դատարկամիտ անապարծի

դեր ես ստանձնել, երբ առանց ամաչելու ինքդ քո մասին գրում ես սեպհական ձեռքով՝ «պ. Քամալեանը նոր մարդ չէ, երկար տարիներ հայ դպրոցներում ուսուցիչ է, բացի այդ հայ ընթերցող հասարակութեան յայտնի է իւր գրական գործունէութեամբ» (էջ 28), ու հազուադիւս «ցուցակ ծառայութեանդ» վերջացնում ես այս խօսքերով՝ «Քամալեանցը 25 տարի իբրև ուսուցիչ թոքերը մաշել է, հայ մանուկների համար բազմաթիւ գրքեր է գրել, անապահով վիճակում տապակուել է», և այլն, և այլն (էջ 61): Մի գարմանար, սիրելի Լևոն, որովհետև այդ սողերի գրողը Քամալեան Ս.-ն է... Այդ «ցուցակ ծառայութեանը» լրացնելու և աւելի ճիշտ պատկերացնելու համար, պէտք է վերոյիշեալ սողերի փոխարէն՝ անուշայման կարգալ հետևեալը. «պ. Քամալեանցը նոր մարդ չէ, հին է, այնքան հին, որ երբ իր ծնողները դեռ աշխարհ չէին եկել, երկար տարիներ հայ դպրոցներում «հակաբնական հակումների» գիտութեան «մանկա...վարժ» է եղել, բացի այդ հայ ընթերցող հասարակութեան յայտնի է իր գրական խուլիգանութեամբ և անբարոյական գործունէութեամբ: 25 տարի իբրև ուսուցիչ թոքերը մաշել է անմեղ աշակերտների պատիւը բռնաբարելով, բազմաթիւ գրքեր հրատարակել, որպէսզի այդ կերպ կարողանայ իր կեղտոտութիւնները ծածկել, անապահով վիճակում տապակուել է՝ լուրջ բաներ

հրատարակելու համար կոպէկներ է խնայել, իսկ եսական փառքի ու փողոցային հայհոյանքների համար առատաձեռն գտնուելը»: Դատարկամիտ անապարժ *), ահա այդ է իսկապէս քո «ցուցակ ծառայութեանը». ուրեմն գրանո՞վ ես պարծենում:

Օ՛, հայկական իրականութիւն...

Քամալեանց Սարգիսը՝ իրրև աննամուս և անստօթ, ամաչել չգիտէ: Այն, նա այդպէս է եղել իր ամբողջ կեանքում և շարունակում է այդպէս էլ մնալ: Ահա միքանի նմուշ: Ինչպէս յայտնի է, Քամալեանը անկողն պնակայէզի դեր է կատարել և կատարում այս և այն հարուստի տանը: Նորերս մի օր գնում է մի հարուստի տան զանգը քաշում. ծառան դուրս է գալիս և հարցնում.

— Ի՞նչ ես կամենում:

— Ո՞վ կայ տանը:

— Ես քեզ հարցնում եմ՝ ի՞նչ ես կամենում:

— Արի, գուռ բաց արա:

— Ո՞չ, պատասխանում է ծառան, չեմ կարող:

— Ինչո՞ւ:

*) Դատարկամիտ անապարժի «ցուցակ ծառայութեան» գոհարներից մէկն էլ կազմում է այն, որ իր պատկերը բազմացրել է «բաց նամակ»— փոստ-քարտերի վրայ և տարածելու համար զաւառներն ուղարկել իր ձեռքով: Ամօթ:

— Ինձ պատուիրել են ասեմ, որ արգելուած է քո մուտքը այստեղ. տան հիւրերն էլ են զըզվում քեզանից»:

Մի ուրիշ հարուստի տանը երեկոյեան ճրագը հանգչելու վրայ է, Քամ.-ը խնդրում է աղախնից նաւթ մութի մէջ չնստելու համար. տանտիրուհին պատասխանում է.

— «Ի՞նչ է վէր ընկել, չի կորչելի՞ւ. ասենք թէ ժամի դուռը բաց է, չէ՞ որ շանն էլ ամօթ է հարկաւոր: Ճաշը կերաւ, տրաքուեց, թո՞ղ ջհանգամուռի, էլի: Ես ո՛չ գլուխ ունեմ, ոչ էլ ժամանակ աննամուսների հետ նստել զրոյցելու»:

Մի ուրիշ տան մէջ էլ Քամ.-ի ներկայութեամբ մի տիկին երբ իր երեխային ծեծելոյ յանդիմանում է, Քամ.-ը մէջ է ընկնում և իբր հագուազիւտ «մանկա...վարժ» նկատողութիւն անում.

— Տիկին, երեխայի հետ այդպէս վարուել չի կարելի, դա մանկավարժութեան դէմ է...

— Սրատ ունէք, ձեր գլխին սուէք, բարկացած պատասխանում է տանտիրուհին և խօսքը նրա բերանում կիսատ թողնում. բն իսկ այդ մանկավարժութեան դէմ չէ՞, որ է՛նքան զարմանալի բաներ են զրում ձեր մասին և արգարանալու համար դատարանի դուռն են ցոյց տալիս, իսկ դուք չէք կարողանում պատասխանել և դատարանից խայտառակ կերպով փա-

խուստ էք տալիս: Ինձ խրատել հարկաւոր չէ. բա՛շալը՞ քր զեղ ունենայ, իր գլխին կ'անէ, կայն, կայն:

Ջարմանում եմ, սիրելի Լեոն, թէ էդ տնաքանդը ինչպէս է, որ ամաշել չգիտէ. նրա երեսը եարաբ ի՞նչ բուլղաղարի հաստակաշուց է շինուած, որ ամենևին քաշուելու և կարմրելու ընդունակութիւն չունի:

է՛հ, ձանձրացայ, էլ չեմ ուզում շարունակել, այսքանն էլ բաւական է՝ ցոյց տալու, թէ ի՞նչ գրական խուլիզանի հետ գործ ունենք: Ասած է՝ լրբի, անգգամի երեսին թքեցին, ասաց՝ վերեից անձրև է ցողում: Արի ու գլուխ դիր այդպիսի աննամուսի հետ ու օրինաւոր բան հասկացրու, դրա համար նրկաթի շղեր եւ գոմէշի համբերութիւն է հարկաւոր: Ինձ համար դժբաղդութիւն է, այն էլ շատ մեծ դժբաղդութիւն այդ «աֆերիստ խուլիզանի» հետ բանակուել մղելը: Բայց ի՞նչ պէտք է արած, ստիպուած եմ գրիչ շարժելու: Լսել եմ դու էլ ես մտազիր պատասխանելու: Իմ կարծիքով չարժէ, ի հարկէ, նրան այդ պատուին արժանացնել, որովհետև այդ խուլիզանի հրատարակած ողորմիլի գրքոյկում առաջ բերած բոլոր անտրամաբնական մտքերն ու ծակ փիլիսոփայութիւնները զուցէ արժէք ունենան իրա նման անբարոյական և մտասնունկ իմաստակ խիկարների համար,

բայց ոչ երբէք առողջ և հասուն դատողութեամբ
առաջնորդուող գրագէտների համար:

Եղբայր սիրելիս, առել եմ և էլի կ'ատեմ,
որ ինչ ուզում ես արած, միայն թէ ՀԵՌՈՐԻ ՓԱ-
ՆԻՐ ԳՐԱԿԱՆ ԽՈՒՂԻԳԱՆԻՑ: Այո, այդ անըզ-
գամի հետ պիտի մի գնիլ, ափսոս ես դու: Բայց
քո բնաւորութիւնը, տեմպերամենտն ու խառ-
նուածքը ինձ լաւ յայտնի լինելով, գիտեմ՝ դու
առւ Կենդան չես, դուրս կը գաս փաստերով
նրան աւելի ջախջախելու և իր չափը կը ճա-
նաչացնես, գուցէ այն ժամանակ խելքի գայ-
բայց ոչ, սապատաւորին ուղղողը միայն գերեզ-
մանն է:

Ոչ-որ էլ չի կարող քեզ մեղադրել քո նո-
րանոր մերկացումների համար, քանի որ էլի
ինքն է առիթ տուողը, ինքն էր լրբաբար նորից
ծաղրել քեզ պատիւ բերող խլութիւնդ:

Ասած է՝ «օձի պիտի որ ցաւի, կը գայ
ձանապարհի մէջ տեղում կը մեկնուի»: Գժուար
թէ Քամ.-ը այլևս ուղղուի և մարդկութեան
ծառայութիւն անէ. նրա ժամը վերջացել է...
Աննօրմալ հակումն այդպէս անաքանդ բան է...

Խորին յարգանքով՝

ԳՐԻԳՈՐ ԲԱՆԱՍՍԱՆԵԱՆ



ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵԻՆԱԿ
ԱԶԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. «Ռոստոմ և Սարման» (պատմական պոեմ), Թբիլիզի
1896 թ. 25 կ
2. «Առիւծաձև Մհեր» (պատմ. պոեմ), Մոսկուա 1899 թ. 25
3. «Զղայցունք» (ժողովածու նորագոյն բանաստեղծու-
թիւններ), Վենետիկ 1902 թ. 40
4. «Պատիկ Մհեր» (պատ. պոեմ), Բաթում 1904 թ. 25
5. «Ուրբիկներէ արցունքները» (բանաստեղծութիւններ),
Բաթում 1904 թ. 30
6. «Երկու Պահլուան» (պատմ. պոեմ), Թբիլիզի 1904 թ. 25
7. «Սասունցի Գուրի» , Ա. հատոր. 40
8. » » , Բ. հատոր. 40
9. «Հեռու փախիլը գրական խուլիզանից» 10

Գնիւց ցանկացողները թոյլ գիտեն Թբիլիզի գրա-
վաճառներին:



Շ ու լ ա ո Վ լ ոյ ս է ա հ ս ն հ լ ու լ

ԼԵԻՈՆ ՄԵԼԻՔ-ԱԳԱՄԵԱՆՅԻ

ԻՄ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Բ Ը Բ Ո Յ Ը Պ Է Ս Ը Ն Կ Ը Թ Ե Թ

ԱՐԵՆ-ՐԻՅ ԱՐՀԱՄԱՐՀՈՒԱԾԻՆ

63.168